ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՈՅԱՆ ԳՈՀԱՐ ՎԱՀԱՆԻ

ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՈՒՏԻԶՄԻ ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ 00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
(Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ.Ռ. Հովյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռ.Ն. Ազարյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ի.Ա. Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2017 թ.-ի դեկտեմբերի 20-ին, ժամը՝ 12:00–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ.-ի նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա.Հ. Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աուտիզմը մեր օրերում զարգացման ամենահաճախ ախտորոշվող խանգարումներից է: Այն բնութագրվում է հաղորդակցման միջոցների կիրառման դժվարություններով, վարքային և հուզակամային ոլորտների, ճանաչողական գործընթացների յուրօրինակ դրսևորումներով, շփման նախաձեռնության պակասով (М.Ю. Веденина 1998, В.Е. Каган 2000, 2016, L. Scafer 2000, Э. Меш, Д. Волф 2003, Е.С. Иванов, Л.Н. Демьянчук, Р.В. Демьянчук 2004, Ф. Аппе, A. Miller, 2006 Е.А. Янушко 2011): Երբ հաղորդակցման միջոցները թերի են կամ բացակայում են, խանգարվում է երեխայի զարգացման բնականոն ընթացքը, իսկ սոցիալական հարմարումը դառնում է անհնար:

Ըստ գոյություն ունեցող վիճակագրական տվյալների կարելի է նշել, որ վերջին 20 տարիների ընթացքում կտրուկ աճել է աուտիզմ ունեցող երեխաների թիվը, մինչդեռ խնդրի լիարժեք հաղթահարմանն ուղղված մեթոդներն ու միջոցները դեռևս գտնվում են մշակման և զարգացման փուլում (Л.М. Шипицына 1997, И.Б. Агаева, И.О. Баранова, И.В. Сухорукова 2012):

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը փաստում է, որ շատ քիչ հեղինակներ են անդրադարձել աուտիզմ ունեցող երեխաների, մասնավորապես, նրանց խոսքային հաղորդակցման ձևավորման միջոցների, մեթոդների և դրանց զարգացման ուղիներն ուսումնասիրող հիմնախնդիրներին (К.С. Лебединская, О.С. Никольская 1989, Е.М. Кафьян 2009, Е.Н. Солдатенкова 2012): Բացի այդ, գոյություն ունեցող մեթոդների մեծ մասը հիմնականում ուղղված է աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացմանը (Е.Р. Баенская, М.М. Либлинг, О.С. Никольская 1997, Л.Г. Нуриева 2003, 2010): Անդրադառնալով այս հիմնահարցին և ամենևին չբացառելով խոսքի զարգացմանն ուղղված ժամանակակից մեթոդների կիրառման հնարավորությունները՝ պետք է հատկապես առանձնացնել խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված լոգոպեդական խմբային աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը, մանկավարժական միջոցների, մեթոդների, սկզբունքների մշակումը և դրանց կիրառման պայմանների առաջադրումը, որը կնպաստի աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանը: Ի վերջո, լոգոպեդական պարապմունքների վերջնանպատակը խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման և զարգացման աշխատանքների կազմակերպումն է, ինչը նման երեխաներին սոցիալական միջավայր ներգրավվելու կարևորագույն գործընթացի կայացման հաջողության գրավականն է:

Աուտիզմ ունեցող երեխաները զարգացման առանձնահատկություններով շատ տարբեր են, սակայն հաղորդակցման խանգարումներն ընդհանուր են բոլորի համար:

Տեսական ու գործնական ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ այս համակազմի երեխաների մեծ մասը չի կարողանում արտաբերել բառեր, նախադասություններ, ինչն էլ բարդացնում է հաղորդակցման գործընթացը: Միևնույն ժամանակ, երեխաների մյուս մասը, արտաբերելով բառեր ու նախադասություններ, դժվարանում է դրանք կիրառել հաղորդակցման ընթացքում: Այս առումով մենք կարևորում ենք ընտրված համակազմի երեխաների հաղորդակցման զարգացմանն ուղղված այնպիսի միջոցների, մեթոդների մշակումը, որը հնարավորություն կտա ձևավորել խոսքային հմտություններ և կիրառել դրանք նպատակաուղղված՝ ծառայեցնելով հաղորդակցման գործընթացի կայացմանը: Պետք է նշել, որ միայն խոսքին անհրաժեշտ չափով տիրապետելու հանգամանքը բավարար չէ այս խնդրով երեխային սոցիալական միջավայրում հարմարվելու համար: Խնդիրը խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացման ապահովումն է, որը դեռևս թերի օղակ է մեր համակարգում: Ելնելով այս հանգամանքից՝ աուտիզմի շտկման հիմնահարցը ներկայումս համարվում է հոգեբանամանկավարժական կարևորագույն խնդիր ամբողջ աշխարհում և գրավում է տարբեր բնագավառների մասնագետների ուշադրությունը (Л.М. Шипицына 1997, Е.С. Иванов, Л.Н. Демьянчук, Е.П. Ильин 2009, Т. Деланин 2016):

Մեր կողմից իրականացված բազմաձավալ ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ խնդրո հարցի վերաբերյալ առկա են տեսական և գործնական մի շարք բացթողումներ, թերի և չլուսաբանված կողմեր. մասնավորապես՝ չկան աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ուղղված մեթոդական աշխատանքներ, ծրագրեր, ուղեցույցներ: Գործնականում ևս առկա են մի շարք բացթողումներ. աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքներում գրեթե չեն կազմակերպվում խոսքային հաղորդակցման միջոցների զարգացմանն ուղղված խմբային պարապմունքներ:

Հետազոտության արդիականությունն է հավաստում նաև այն հանգամանքը, որ բացակայում են մայրենի լեզվով մշակված՝ աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված օրինակելի ծրագրեր, հաղորդակցման գործընթացի զարգացման համար նախատեսված վարժություններ, խաղեր ու խաղային առաջադրանքներ:

Հիմնախնդրի տեսական և գործնական անբավարար մշակվածությունն ավելի է դժվարացնում աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված մանկավարժական մեթոդների ընտրությունը, լոգոպեդական աշխատանքների նպատակաուղղված անցկացումը:

Հիմք ընդունելով վերոնշյալը կարող ենք փաստել, որ առկա է աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն

ուղղված միջոցների, մեթոդների մշակման անհրաժեշտություն: Հետևապես, մանկավարժական միջոցների, օրինակելի ծրագրի, վարժությունների, խաղերի, մեթոդների առաջադրումը և դրանց կիրառման արդյունավետության փորձարարական հիմնավորումը կնպաստի աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման գործընթացի կայացմանը, ինչով էլ պայմանավորված է մեր հետազոտության թեմայի արդիականությունը: Այս փաստարկն ավելի է ընդգծում հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության նպատակն է մշակել աուտիզմի շտկման գործընթացում կիրառվող խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցներ և մեթոդներ:

Հետազոտության օբյեկտն աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված միջոցները, մեթոդներն ու դրանց կիրառման պայմաններն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորման գործընթացի կազմակերպումն ու անցկացումն առավել արդյունավետ կլինի, եթե՝

- հաշվի առնվեն աուտիզմ ունեցող երեխաների զարգացման յուրահատկությունները,
- ապահովվի ծնողների մասնակցությունը լոգոպեդական խմբային աշխատանքներին որպես ուղղորդող մասնակիցներ,
- կիրառվեն առաջարկվող մանկավարժական միջոցները, վարժությունները, խաղերը, մեթոդները և օրինակելի ծրագիրը:

Հետազոտության նպատակին և գիտական վարկածին համապատասխան առաջադրվել են հետևյալ հիմնական **խնդիրները՝**

1. ուսումնասիրել հետազոտվող հիմնախնդրի մշակվածության աստիճանը և ժամանակակից մոտեցումները գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում,
2. ուսումնասիրել և վերլուծել աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները,
3. մշակել աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցներ, մեթոդներ, առաջադրել մանկավարժական պայմաններ և փորձարարական ճանապարհով հիմնավորել առաջարկվող մոտեցումների կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության **տեսական և մեթոդաբանական հիմք** են հանդիսացել՝

- Աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման առանձնահատկություններ (Л.С. Нуриева 2003, 2010):

- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П.Я. Гальперин 1977):
- Հաղորդակցման գործընթացում երեխայի անձի ձևավորման տեսությունը (А.А. Леонтьев, 1969, 1997, М.И. Лисина 1985, 2009):
- Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորման ուղղությունները (А.В. Хаустов 2007, 2009):
- Աուտիզմի հիմնախնդրի հոգեբանական վերլուծության տեսություն (Ф. Аппе, 2006):

Առաջադրված խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները՝**

- գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և ընդհանրացում,
- հետազոտվողների բժշկական և մանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն,
- հոգեբանամանկավարժական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում,
- հետազոտման փորձարարական մեթոդներ՝ հաստատող և ձևավորող,
- ստուգողական փորձարկումներ, թեստավորում,
- մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը.

- ուսումնասիրվել է աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման կարողությունների ձևավորմանն ուղղված աշխատանքների դրվածքը տարբեր հաստատություններում,
- բացահայտվել է մասնագետների, ուսանողների, ծնողների տեղեկացվածության մակարդակը աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման և զարգացման հարցերում,
- սահմանվել են այս համակազմի երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորման հիմնական ուղղությունները, բնույթը, բովանդակությունը,
- մշակվել է աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված մեթոդների, միջոցների, վարժությունների, խաղերի համալիր, օրինակելի ծրագիր, առաջադրվել են մանկավարժական պայմաններ և փորձարկմամբ հիմնավորվել դրանց կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության **տեսական նշանակությունը՝**

- հետազոտության արդյունքների տեսական վերլուծությունն ու համադրումն է, աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորման հնարավորությունների, առաջարկվող միջոցների, մեթոդական մոտեցումների և պայմանների կիրառման նպատակաուղղվածության տեսական հիմնավորումը:

Հետազոտության **գործնական նշանակությունը՝**

- աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մեթոդական մոտեցումների մշակումն ու դրանց ներդրումն է նախադպրոցական և դպրոցական ուսումնական պրակտիկայում,
- առաջարկված գործնական և ծրագրային նյութերը (խաղային առաջադրանքներ, վարժություններ, հնարներ, խորհուրդներ, պայմաններ) կարող են գործածվել ինչպես նախադպրոցական, այնպես էլ՝ կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման և զարգացման գործընթացում: Դրանք կարող են կիրառվել և՛ անհատական, և՛ խմբային պարապմունքների ընթացքում:

Ատենախոսության նյութերը՝ հետազոտության արդյունքները, հետևությունները, հիմնական դրույթները կարող են կիրառվել նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների կողմից՝ դասախոսությունների և հատուկ դասընթացների անցկացման գործընթացում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական **դրույթներն են.**

1. Մանկավարժական արդի միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների առաջադրումը լոգոպեդական խմբային աշխատանքների արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ նախադրյալ է:

2. Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցները, օրինակելի ծրագիրը, վարժությունները, խաղերը, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները:

3. Առաջարկված մոտեցումները նպաստում են աուտիզմ ունեցող երեխաների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանը:

Հետազոտությունն իրականացվել է երեք փոխկապակցված փուլերով**:** Առաջին՝ որոնողական կամ կազմակերպչական փուլում (2010-2011թթ.) իրականացվել է գիտամեթոդական գրականության ուսումնասիրում:

Վերլուծության են ենթարկվել աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները, վերջիններիս ձևավորման արդի և ավանդական մեթոդիկաները, ընտրվել է հետազոտվող երեխաների համակազմը, որոշվել՝ հետազոտության առարկան, նպատակը, հստակեցվել վարկածը, առաջադրվել են հետազոտության խնդիրները և մեթոդները:

Երկրորդ՝ փորձարարական փուլում (2011-2013թթ.) իրականացվել են մի շարք հավաստիացնող փորձեր և միամյա մանկավարժական փորձարարական ուսուցում: Հավաստիացնող փորձերի ճանապարհով ուսումնասիրվել են նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող 90

երեխայի խոսքային հաղորդակցման միջոցների զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության երրորդ կամ ամփոփիչ փուլում (2013թ.) իրականացվել է հետազոտության արդյունքների վերլուծություն և ընդհանրացում: Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարվել են եզրակացություններ, կազմվել է ատենախոսական տեքստը, մշակվել՝ հավելվածը, կազմակերպվել են հետազոտության արդյունքների ներդրման աշխատանքներ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորումը ապահովված է փորձարկվողների բավարար քանակով, անցկացված աշխատանքների ծավալով և տևողությամբ, հետազոտման ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև՝ փաստացի նյութի մաթեմատիկական մանրամասն մշակմամբ: Տեսական և գործնական դրույթների հավաստիությունը և հիմնավորումը ապահովված են նաև հեղինակի հրատարակություններով, 2010-2014 թվականների հետազոտության արդյունքների քննարկումներով և ելույթներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթները, արդյունքները և հետևությունները 2010-2014 թվականներին քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հատուկ մանկավարժության», իսկ հետագայում՝ «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնների նիստերում, Երևանի թիվ 78 նախադպրոցական ուսումնական հաստատության, թիվ 81 համալիր մանկապարտեզի, թիվ 180 ներառական կրթություն իրականացնող դպրոցի մանկավարժական խորհուրդներում, «Փյունիկ» հաշմանդամների միության մասնագիտական սեմինարների, քննարկումների ընթացքում: Հետազոտության արդյունքները ներկայացված են հեղինակի կողմից հրատարակած գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն շարադրված է համակարգչային 155 էջերում, ներառում է 10 աղյուսակ, 13 տրամագիր, 1 նկար, 3 գծապատկեր, 4 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածականում հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության

խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը:

Ատենախոսության **«Հետազոտության հիմնախնդրի դրվածքը, խնդիրները, մեթոդները և կազմակերպումը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Խոսքային հաղորդակցման միջոցների զարգացման գիտատեսական վերլուծություն» ենթագլխում լուսաբանված են տարբեր հեղինակների (H. Bryan 1975, А.А. Леонтьев 1997, Ю.Ш. Коен 2008, М.И. Лисина 1985, 2009, Морозова, С.В. Довбня 2011, И. Шпицберг 2013, С. Течнер 2015) մոտեցումները խոսքային հաղորդակցման գործընթացի զարգացման վերաբերյալ, արժևորված է վերջինիս դերը երեխայի անձի ձևավորման գործում, ինչպես նաև ընդգծված է մեծահասակի և հասակակցի շփման անհրաժեշտությունը խոսքային հաղորդակցման միջոցների զարգացման ընթացքում: Այս ենթագլխում անդրադարձ է կատարվել նաև հաղորդակցման բացակայության պայմաններում ձևավորվող մի շարք խնդիրների և սոցիալական տարբեր միջավայրերում երեխայի չհարմարվելու ցավալի երևույթի դրսևորումներին:

«Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են այս համակազմի երեխաների խոսքային հաղորդակցման յուրահատկությունները, տարբերակված են նաև նրանց խոսքային հմտությունների և խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները, վերլուծված է բնականոն զարգացում և աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների զարգացման համեմատական բնութագիրը: Մեկնաբանված են աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման դժվարությունները զարգացման դեռևս վաղ շրջանում:

«Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային գործունեության զարգացմանն ուղղված արդի և ավանդական մոտեցումներ» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է հիմնախնդրի դրվածքը տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես նաև հաղորդակցման գործընթացի ձևավորմանն ուղղված տարբեր մեթոդների, հնարների էվոլյուցիոն զարգացումը, վերլուծված են աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման դժվարությունների պատճառները, առաջարկվող նոր մեթոդների ընտրության տարբերակները՝ ըստ տարբեր հետազոտողների (Օ.Ս. Նիկոլսկայայի 1981, Լ. Գիլբերտի և Թ. Պիտերսի 2003, Օ.Բ. Բոգդաշինայի 2012 և այլոց):

«Հետազոտության տեսանկյան հիմնավորումը, խնդիրները, մեթոդները և կազմակերպման փուլերը» խորագրով չորրորդ ենթագլխում հիմնավորված

են հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրներն ու մեթոդները, համաձայն որոնց ներկայացվող հիմնահարցը խիստ արդիական է, սակայն դեռևս կան չլուսաբանված կողմեր, որն էլ բարդացնում է աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Վերոնշյալի ամբողջական համակողմանի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռնի առկա խնդիրների բացահայտմանը և նոր միջոցների, մոտեցումների մշակմանը, որն էլ ավելի արդյունավետ կդարձնի կազմակերպվող աշխատանքները: Ներկայացված են նաև կազմակերպվող աշխատանքների հիմնական փուլերը:

«Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի հետազոտության վերլուծություն» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորմանն ուղղված արդի մեթոդների վերլուծություն» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված են այս համակազմի երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված արդի մեթոդներ, վերլուծված են վերջիններիս կիրառման հնարավորությունները, բացահայտված են դրանց թերի և բաց կողմերը, ինչպես նաև՝ նշված է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների դրվածքը տարբեր ուսումնական հաստատություններում: Հետազոտության արդյունքները վկայում են ուսումնասիրվող հիմնահարցի ուղղությամբ իրականացվող աշխատանքներում չլուծված մի շարք խնդիրների առկայությունը՝ թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում մշակել նոր ծրագրեր, տեսագործնական նյութեր, մեթոդական մոտեցումներ և հնարներ ինչպես մասնագետների, այնպես էլ՝ ծնողների համար:

«Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված հարցերի վերաբերյալ մասնագետների և ծնողների իրազեկության սոցիալական հետազոտություն» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են 30 ծնողի, 35 լոգոպեդի և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 50 ուսանողի հարցման, զրույցի, անկետավորման արդյունքները:

Հետազոտության տվյալները փաստում են, որ լոգոպեդների 85.7%-ը, ուսանողների մեծ մասը (80%) և ծնողները (100%) կարևորում են խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների անցկացումը, սակայն, միևնույն ժամանակ ընդգծում, որ համակարգում կան բազում խնդիրներ. չկան խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն

ուղղված ծրագրեր, մշակված նյութեր, դրանց կիրառման համար անհրաժեշտ պայմաններ:

«Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման կարողությունների ուսումնասիրությունը» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող 90 երեխայի խոսքային հաղորդակցման զարգացման մակարդակի բնութագիրը:

Համաձայն ստացված արդյունքների՝ հետազոտվողների մեծ մասին բնորոշ են հաղորդակցման դիմախաղային՝ ոչ խոսքային ձևերի (հայացքով, ժեստերով, դիմախաղով հաղորդակցում), առարկայագործնական (սոցիալական հակազդումներ՝ հակազդում անվանը, ողջույնին, անծանոթներին, ընկերներին), հաղորդակցման խոսքային ձևերի (պարզ դիմելաձևեր՝ խնդրանք, ցանկություն, երկխոսության հմտություններ՝ հարցեր տալ, պատասխանել, մեկնաբանություններ կատարել), հաղորդակցման գործընթացում դրսևորվող տարբեր հմտությունների (ինքնասպասարկում, գրավոր հմտություններ, կենցաղային, ճանաչողական, խաղային) և կարողությունների զարգացման մակարդակի ցածր ցուցանիշներ:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ հաղորդակցման առումով ևս այս երեխաները խիստ տարբեր են: Դիտարկումների արդյունքում ընտրված՝ խոսքով, ժեստերով, նեգատիվ պահվածքով, ընտրողական հաղորդակցման դրսևորմամբ (սելեկտիվ մուտիզմ) նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող երեխաները խմբավորված էին 2 խմբերում՝ հաշվի առնելով հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները: 1-ին խմբում ընդգրկված երեխաները (15 երեխա) կարողանում էին արտաբերել բառեր, նախադասություններ, արտահայտություններ, ունեին խոսք, ինչպես նաև հաղորդակցման տարրեր՝ անկախ դրանց նպատակային կիրառումից: 2-րդ խումբը (75 երեխա) համալրող մասնակիցները ընդհանրապես խոսք չունեին և չէին կարողանում հաղորդակցվել:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ փորձարկվողների մեծ մասը չէր կարողանում ինքնուրույն կիրառել հաղորդակցման ինչպես խոսքային, այնպես էլ՝ ոչ խոսքային միջոցներ: 1-ին խմբի փորձարկվողների 33.3%-ը (5-ը) միայն հուշումներից, և լոգոպեդական միջամտությունից հետո էր կարողանում կիրառել պարզ դիմելաձևեր՝ ողջունել ընկերներին, մասնագետներին, մաղթել ցտեսություն, խնդրել ցանկալի առարկան, որն էլ, սակայն, երբեմն հնչում էր էխոլալիաների ձևով կամ փոխարինվում՝ ժեստերով: Իսկ 2-րդ խմբի փորձարկվողները խոսքով ընդհանրապես չէին հաղորդակցվում և ցանկություններն արտահայտում էին կամ ժեստերով, կամ ագրեսիայով, կամ էլ՝ ձայնարձակմամբ: 2-րդ խմբի փորձարկվողների 6.6%-ը (5) ցանկություններն

արտահայտում էր ժեստերով, կամ դիմացինի ձեռքի միջոցով ցույց տալու եղանակով:

Վերոնշյալ փաստարկները վկայում են աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ուղղված նոր, արդի մեթոդների, միջոցների մշակման անհրաժեշտության մասին:

Ատենախոսության՝ **«Լոգոպեդական աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններն աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման գործընթացում»** խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված աշխատանքների հիմնական բովանդակությունը» խորագրով առաջին ենթագլխում շարադրված է խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման տեսագործնական հիմնավորումը, ներկայացված են համակարգում առկա թերի կողմերը, ներկայացված են աշխատանքների կազմակերպման ընդհանուր նկարագիրը, փուլերը:

«Խմբային պարապմունքների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մեր կողմից մշակված մեթոդներ, միջոցներ, վարժություններ, խաղեր, ցուցումներ և օրինակելի ծրագիրը: Ընդգծված են լոգոպեդական խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները, առաջարկվող մանկավարժական պայմանների կիրառման յուրահատկությունները, լոգոպեդական խմբային աշխատանքների կազմակերպման ընդհանուր և մասնավոր սկզբունքները, ներկայացված է ուղղորդող մասնակիցների կողմից իրականացվող գործողությունների կատարման հաջորդականությունը:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող երեխաների համար նախատեսված օրինակելի ծրագիրը, համաձայն խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման և զարգացման վարկածի, հնարավորություն է ընձեռում լուծել հետևյալ խնդիրները՝

- ձևավորել և զարգացնել աուտիզմ ունեցող երեխայի հաղորդակցման դրդապատճառային հիմքերը,
- զարգացնել և ակտիվացնել հաղորդակցման ոչ խոսքային միջոցների կիրառման կարողությունները, հմտությունները,
- ձևավորել հաղորդակցման առարկայագործնական միջոցների կիրառման հնարներ,
- ձևավորել հաղորդակցման խոսքային միջոցներ:

Ստացված արդյունքները ներկայացված են հաջորդ ենթագլխում:

«Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մոտեցումների կիրառման արդյունավետության փորձարարական հիմնավորումը» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են մեր կողմից առաջարկվող օրինակելի ծրագրի հիմնական ուղղությունները և 2011-2013 թթ.-ի ընթացքում իրականացված փորձարարական ուսուցման արդյունքները:

Փորձարարական ուսուցումն անցկացվել է թիվ 81 համալիր մանկապարտեզում, թիվ 180 ներառական կրթություն իրականացնող դպրոցում, «Փյունիկ» հաշմանդամների միությունում, որին մասնակցել են նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի աուտիզմ ունեցող 40 երեխա՝ 20-ը փորձարարական, 20-ը՝ ստուգողական խմբերում: Փորձարարական խմբում կազմավորվել է ևս հինգ խումբ, յուրաքանչյուրում՝ չորսական մասնակից: Իսկ ստուգողական խմբում աշխատանքներն անցկացվել են անհատական պարապմունքների ձևով, երբեմն էլ՝ խմբային, ինչպես որ հաստատված էր տվյալ հաստատության ուսումնական պլաններով:

Մինչ փորձարարական ուսումնասիրությունը՝ երկու խմբերի 40 հետազոտվողների 49%-ը, ընդհանրապես չէր կարողանում կիրառել հաղորդակցման խոսքային միջոցներ, 15.5%-ը կիրառում էր այդ միջոցները միայն ուղղորդումների, հուշումների պայմաններում, 27.5%-ը սխալ էր կիրառում, այսինքն՝ ոչ նպատակային, իսկ երեխաների ինքնուրույնության ամենացածր ցուցանիշը կազմում էր 7.5% (Աղյուսակ 1):

Արձանագրված ցուցանիշները վկայում են, որ այս համակազմի երեխաները արտաբերելով առանձին բառեր, կրկնվող նախադասություններ, այնուամենայնիվ, ինքնուրույն դժվարանում են կիրառել հաղորդակցման խոսքային կամ ոչ խոսքային միջոցներ, չեն կարողանում նաև օգտվել հուշումներից և ուղղորդումներից:

Բացահայտված խնդիրները հաստատեցին աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ու ակտիվացմանն ուղղված արդի մեթոդների և միջոցների մշակման անհրաժեշտությունը: Արդյունքում՝ մեր կողմից մշակվել են մանկավարժական միջոցներ, վարժություններ, խաղեր, ցուցումներ, օրինակելի ծրագիր, մեթոդներ և առաջադրվել են դրանց կիրառման պայմաններ: Աշխատանքներն իրականացվել են փուլային սկզբունքով՝ նախապատրաստական, հիմնական և ամփոփիչ: Յուրաքանչյուր փուլ ունի յուրահատկություններ, որոնց հաշվառումը և պահպանումը խիստ կարևոր է: Դրանցում առանցքային են լոգոպեդական խմբային պարապմունքների կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև՝ ծնողների ներգրավումը որպես ուղղորդող մասնակիցներ:

Այս փուլում ուսումնասիրվել է փորձարկվողների խոսքային հաղորդակցման զարգացման առաջընթացը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հետազոտվողների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման ցուցանիշները փորձարարական ուսուցման տարբեր փուլերում

Ուսումնասիրվող չափանիշներ	Հետազոտման փուլեր	Կատարման արդյունքները															
		Փորձարարական խումբ N=20								Ստուգողական խումբ N=20							
		Ինքն.		Օգն.		Չէին կիրառում		Սխալ էին կիրառում		Ինքն.		Օգն.		Չէին կիրառում		Սխալ էին կիրառում	
		n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Խոսքային հաղորդակցման հիմնական ձևեր՝ խնդրանք, ցանկություն, պահանջ, արտահայտելու կարողություն	Մինչ փորձ.	-	-	2	10	10	50	8	40	-	-	3	15	14	70	3	15
	Փորձ. հետո	3	15	6	30	6	30	5	25	-	-	4	20	13	65	3	15
Սոցիալական հակազդումներ՝ մերժում, համաձայնություն արտահայտելու, ողջույնի, անձնական բնույթի հարցերին պատասխանելու կարողություն	Մինչ փորձ	2	10	3	15	10	50	5	25	2	10	3	15	10	50	5	25
	Փորձ, հետո	5	25	8	40	6	30	1	5	3	15	5	25	8	40	4	20
Պարզ դիմելաձևեր՝ շրջապատող առարկաների անվանում, մարդկանց անվանակոչում, գործողությունների նկարագրում, անվանում	Մինչ փորձ	3	15	4	20	6	30	7	35	4	20	3	15	8	40	5	25
	Փորձ հետո	6	30	7	35	4	20	3	15	5	25	4	20	7	35	4	20
Երկխոսության հմտություններ՝ հարցեր տալ՝ ըստ իրավիճակի	Մինչ փորձ	-	-	2	10	10	50	8	40	-	-	3	15	13	65	4	20
	Փորձ հետո	-	-	6	30	8	40	6	30	-	-	3	15	13	65	4	20
Պատասխանել հարցերին՝ ըստ իրավիճակի	Մինչ փորձ	2	10	4	20	7	35	7	30	2	10	4	20	10	50	4	20
	Փորձ հետո	5	25	7	35	6	30	2	10	2	10	5	25	10	50	3	15
Արդյունքում	Մինչ փորձ	-	7	-	15	-	43	-	34	-	8	-	16	-	55		21
	Փորձ հետո	-	19	-	34	-	30	-	17	-	10	-	21	-	51		18

Միամյա մանկավարժական փորձարարական ուսուցումից հետո արձանագրված արդյունքներում նկատվեց ցուցանիշների աճ, որը պայմանավորված էր առաջարկվող մոտեցումների համալիր կիրառմամբ:

Տրամագիր 1-ից երևում է, որ փորձարարական խմբում, նկատելի է ցուցանիշների աճ՝ ինքնուրույնության՝ 12%-ով, օգնությամբ՝ 19%-ով, և համապատասխանաբար 13% և 17%-ներով կրճատվել են հաղորդակցման խոսքային միջոցներ կիրառել չկարողանալու և սխալ կիրառելու ցուցանիշները: Մինչդեռ ստուգողական խմբում այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմում էին՝ ինքնուրույն՝ 2%, օգնությամբ՝ 5%, չէին կիրառում՝ 4%, սխալ էին կիրառում՝ 3%:



Տրամագիր 1. Աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման միջին ցուցանիշները ուսումնասիրվող երկու խմբերում:

Այսպիսով, խնդիրը խիստ արդիական է և պահանջում է նոր, ժամանակահունչ լուծումներ: Մեր կողմից առաջարկվող մեթոդները, միջոցները, օրինակելի ծրագիրը, վարժությունները, խաղերը, ցուցումները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները նպաստում են աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ու զարգացմանը: Այս փաստը հաստատվում է փորձարարական խմբում արձանագրված ցուցանիշների դրական տեղաշարժով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը, աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված մեթոդների, միջոցների և այս հիմնախնդրով զբաղվող մասնագետների փորձի ուսումնասիրումն, ինչպես նաև մեր կողմից անցկացված մանկավարժական փորձարարական ուսուցման հավաստի արդյունքները թույլ տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. Հետազոտվող հիմնախնդրի անբավարար մշակվածությունը, կազմակերպվող աշխատանքներում առկա բացթողումները, մասնագետների և ծնողների ոչ հստակ տեղեկացվածությունը խնդրո առարկայի վերաբերյալ զգալիորեն բարդացնում են լոգոպեդական աշխատանքների արդյունավետ իրականացումը: Սույն հանգամանքը վկայում է նշված խնդիրների լուծման հրատապությունն ու անհրաժեշտությունը:
2. Հաստատված է, որ աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման դժվարությունները պայմանավորված են մի շարք գործոններով՝ գրեթե չեն կազմակերպվում խմբային պարապմունքներ, առաջադրված չեն դրանց անցկացման մանկավարժական պայմաններ, մշակված չեն խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված միջոցներ, մեթոդներ, խաղեր, վարժություններ, օրինակելի ծրագրեր, հաշվի չեն առնվում երեխաների հետաքրքրությունների նեղ շրջանակը և զարգացման յուրահատկությունները, ինչպես նաև՝ հաղորդակցման միջոցների ձևավորման փուլային սկզբունքը:
3. Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով մեր կողմից առաջարկվել են մանկավարժական միջոցներ, օրինակելի ծրագիր, վարժություններ, խաղեր, ցուցումներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ:
4. Առաջարկվող մանկավարժական միջոցների և մեթոդների համալիր կիրառումը նպաստում է աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորմանն ու զարգացմանը: Այսպես՝
   - Աուտիզմ ունեցող երեխաների 15%-ը սովորեց կոնկրետ իրավիճակներում խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ նպատակաուղղված արտահայտել խնդրանք, ցանկություն՝ հայացքը կենտրոնացնելով ցանկալի առարկայի, առարկայական նկարի վրա կամ մարդու դեմքին: Մինչդեռ փորձարարությունից առաջ ինքնուրույնության որևէ ցուցանիշ չէր արձանագրվել:

- Փորձարկվողների 25%-ը սովորեց հակազդել սոցիալական տարբեր դիմելաձևերի՝ մերժել, համաձայնություն արտահայտել խոսքային միջոցներով, հնչյունակապակցություններով, պատասխանել անձնական բնույթի տարրական հարցերի, ողջունել, մաղթել ցտեսություն, հակազդել անվանը:
- Երեխաների 30%-ը կարողացավ սերտել պարզ դիմելաձևեր՝ անունով դիմել ընկերներին, մասնագետներին, անվանել առարկաներ, երևույթներ, գործողություններ:
- Երկխոսության հմտությունների ուսումնասիրման ինքնուրույնության ցուցանիշներ չարձանագրվեցին թե՛ փորձարարությունից առաջ, թե՛ հետո, սակայն երեխաների 30%-ը ուղղորդող մասնակցի կամ մասնագետի օգնությամբ սովորեց հարցեր տալ թեմայի շրջանակներում, իսկ 25%-ը՝ հարցերին պատասխանել միակազմ նախադասություններով:
- Հաստատված է, որ երեխաների 19%-ը ձեռք բերեց խոսքային հաղորդակցման միջոցներով հաղորդակցվելու կարողություն:

5. Անցկացված հետազոտության արդյունքները վկայում են աուտիզմ ունեցող երեխաների խոսքային հաղորդակցման ձևավորմանն ուղղված մեթոդների, միջոցների համալիր կիրառման արդյունավետության մասին:

6. Առաջարկվող մեթոդներն ու միջոցները, օրինակելի ծրագիրը, վարժությունները, խաղերը, ցուցումները կարող են գործածվել ուսումնական հաստատությունների, զարգացնող և վերականգնողական կենտրոնների մասնագետների կողմից, ծառայել ծնողներին՝ որպես մեթոդական ուղեցույց:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվել է հետևյալ **հրապարակումներում.**

1. **Բարոյան Գ.Վ.,** Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորման փուլերը, Մանկավարժական միտք, N 3-4, Երևան, «Զանգակ-97», 2016, էջ 422-425:
2. **Բարոյան Գ.Վ.**, Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման ձևերը ըստ փորձարարության արդյունքների, «Մանկավարժական միտք», N 4, «Զանգակ-97», Երևան, 2015, էջ 294-297:
3. **Բարոյան Գ.Վ.,** Աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման կարողությունների զարգացման ժամանակակից մոտեցումները, «Մանկավարժական միտք», N 3-4, Երևան, «Զանգակ-97», 2014, էջ 244-247:
4. **Հովյան Գ.Ռ.**, **Բարոյան Գ.Վ.**, Խմբային պարապմունքների անհրաժեշտությունը աուտիկ երեխաների խոսքային հաղորդակցման

ձևավորման գործընթացում, «Մանկավարժական միտք», N 1-2, Երևան, «Զանգակ-97», 2014, էջ 252-257:

5. **Բարոյան Գ.Վ**., Խոսքային հաղորդակցման ձևավորման առանձնահատկությունները աուտիզմի շտկման գործընթացում, «Մանկավարժական միտք», N 1-2, Երևան, «Զանգակ-97», 2012, էջ 249-253:
6. **Բարոյան Գ.Վ.,** Խաղային գործունեության դերը աուտիկ երեխաների խոսքային հաղորդակցման միջոցների ձևավորման գործընթացում, «Գորիսի պետական համալսարանի միջազգային 2-րդ գիտաժողովի աշխատանքների ժողովածու», Գորիս, 2011, էջ 264-267:

БАРОЯН ГОАР ВАГАНОВНА
ОСОБЕННОСТИ И СРЕДСТВА ФОРМИРОВАНИЯ РЕЧЕВОГО ОБШЕНИЯ В ПРОЦЕССЕ КОРЕКЦИИ АУТИЗМА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01.-,,Теория и история педагогики" (Специальная педагогика).

Защита диссертации состоится 20 декабря 2017 г., в 12:00 на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика" по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Аутизм в наши дни считается наиболее часто диагнозируемым нарушением, в то время как методы и средства для полноценного преодоления проблемы находятся на стадии разработок и экспериментов. Аутизм характеризуется тяжелыми нарушениями в развитии ребенка: отсутствием коммуникационных инициатив, трудностью применения коммуникативных средств, особыми формами проявления поведенческих, эмоциональных и познавательных процессов. Примечательно, что дети страдающие аутизмом, имеют разные особенности развития, но трудности связанные с коммуникацией общие для всех. Когда средства коммуникации неполноценны или отсутствуют, нарушается нормальный процесс развития ребенка и социальная адаптация становится невозможной.

В результате наших многосторонних исследований стало очевидно, что относительно объекта нашего исследования существует целый ряд теоретических и практических упущений, а также недостаточно изучены и не освещены следующие аспекты, в частности: нет методических работ, пособии, образцовых программ для формирование средств речевого общения у детей с аутизмом. Итак, мы можем констатировать, что есть необходимость разработки средств и методов для формирования и развития речевого общения у детей с аутизмом. Таким образом, разработка средств, методов и экспериментальное обоснование их эффективности будет способствовать развитию речевого общения у детей с аутизмом и реализации процесса адаптации в социальной среде.

Цель исследования – разработать средства и методы для формирования и развития речевого общения в процессе коррекции аутизма.

Задачи исследования:

1. Изучить степень разработанности исследуемой проблемы в теории и на практике;
2. Изучить и проанализировать особенности применения неречевых и речевых средств у детей с аутизмом;

3. Разработать средства, образцовую программу, упражнения, игры, методы, методические указания и педагогические условия для формирования и экспериментальным путем обосновать эффективность применения рекомендованных подходов.

Научная новизна исследования:

- Изученить постановка работы в разных учреждениях по формировании речевых коммуникативных умении у детей с аутизмом;
- Выявлен уровень информированности специалистов, студентов, родителей в вопросах формирования и развития речевого общения у детей с аутизмом;
- Установлены основные направления, характер и содержания формирования речевого общения у детей с аутизмом;
- Разработан комплекс методов, средств, упражнений, игр, предложена педагогические условия и экспериментально доказана эффективности их применения.

Теоретическая значимость исследования определяется:

- теоретическом анализе и сопоставлении результатов исследовании; теоритическом обосновании возможностей формировании речевого общения у детей с аутизмом, предлагаемых средств, методических подходов;

Практическая значимость исследования определяется:

- разработкой методических подходов формирования и развития речевого общения у детей с аутизмом и внедрения их в дошкольную и школьную практику.
- возможности применения предложенного практического и программного материала (игровые задания, упражнения, приемы, советы, условия) в процессе групповых и индивидуальных занятий как с детьми с аутизмом дошкольного, так и младшего школьного возраста для формирования и развития у них речевого общения.

Апробация исследования. Основные положения, результаты и выводы работы обсуждались на совместных заседаниях кафедр «Специальной педагогики и психологии», а в дальнейшем кафедры «Логопедии и реабилитационной терапии» и «Специальной педагогики и психологии», и Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна (2010-2014гг.); на педагогических советах дошкольного учреждения N 78, комплексного детского сада N 81, инклюзивной школе N 180 города Еревана, а также на профессиональных семинарах организованных в оздоровительном центре «АРБЕС» и в содружестве инвалидов «Пьюник».

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, 3 глав, выводов, списка использованной литературы и приложения. Работа представлена на 155 страницах компьютерного текста и включает 10 таблиц, 13 диаграмм, 1 рисунок, 3 фигуры, 4 приложения.

BAROYAN GOHAR

THE CHARACTERISTICS AND TOOLS OF THE FORMATION OF SPEECH COMMUNICATION DURING THE PROCESS OF THE CORRECTION OF THE AUTISM

Thesis submitted for the degree of candidate of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.01 - "Theory and history of pedagogics" (Special pedagogy)

The defence of the dissertation will take place on 20 december, 2017, at 12:00 at the meeting of the specialized pedagogical committe "Pedagogy" 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: Tigran Mets avenue 17, 0010, Yerevan, Armenia).

SUMMARY

Relevance of the study: Nowadays autism is considered the most frequently diagnosed disorder, while methods and means to fully overcome the problem are at the stage of development and experimentation. Autism is characterized by severe disabilities in the child development: the lack of communication initiatives, the difficulty of using communication tools, special forms of behavioral appearance, emotional and cognitive processes. It is noteworthy that children with autism have different developmental features, but the difficulties associated with communication are common for all. When the means of communication are inadequate or absent, the normal development of the child is disrupted and social adaptation becomes impossible.

As a result of our multilateral research, it became clear that in the subject of our study there are a number of theoretical and practical flaws, insufficiently studied and unenlightened sides, in particular: there are no substantive works that reveal the formation of speech communication of children with autism, means of verbal communication and methodical aids are not developed. In practice, there are also a number of omissions. So, we can state that there is a need to develop tools and methods for the formation and development of speech communication of children with autism. Thus, the development of tools, methods and the experimental substantiation of its effectiveness will contribute to the development of speech communication tools of children with autism and will enable the adaptation process in the social environment.

The aim of the study is to develop tools and methods directed to the formation and development of speech communication during the procces of correction of the autism.

Objectives of the study:

1. to determine the degree of study and development of the investigated problem and modern approaches in the scientific and methodological literature and in the practice;
2. to investigate and analyze the features of the use of speech and non-speech communication of children with autism;
3. to develop tools, exercises, games, methods, advice, a sample program for the formation of speech and non-speech communication of children with autism and to

propose pedagogical conditions for their use and to validate experimentally the effectiveness of the application of the proposed approaches.

The scientific novelty of the study is determined by:

- learning the ways of work to develop speech communications formation of children with autism in the various institutions;
- determining the level of awareness among specialists, students, parents about the formation and development of speech communication tools of children with autism;
- setting the main directions, characteristic and content of the formation of speech communication of children with autism;
- developing a sistem of tools, methods, exercises, games, a sample program for the formation of speech communication of children with autism, proposing pedagogical conditions and validating experimentally the effectiveness of their applications.

Theoretical significance of the study is in:

- theoretical analysis and research results, theoretical substantiation of the possibilities of forming speech communication tools of children with autism, the purposefulness of the proposed tools and the application of methodological approaches and conditions;

Practical significance of the study:

- development of methodological approaches regarding the formation and development of speech communication tools of children with autism and their implementation in pre-school and school practice;
- the proposed practical and program materials (game assignments, exercises, receptions, advice, conditions) can be used both with children with autism of preschool age, and with children of primary school age in the process of formation and development of means of verbal communication. Their application is possible both in the process of group and individual sessions.

Approbation of the study: The main statements, results and conclusions of the work were discussed at the joint meetings of the chair of "Special Pedagogy", and later on the chair of "Speech and Rehabilitation Therapy" of Kh. Abovyan Armenian State Pedagogical University (2010-2014); on pedagogical councils of preschool center number 78, complex kindergarten N 81, inclusive school N 180 in the city of Yerevan, as well as at professional seminars organized in "ARBES" health center and "Pyunik" community of the disabled.

Structure and scope of the dissertation: The dissertation consists of introduction, 3 chapters, conclusions, a list of used literature and an appendix. The work is presented on 155 pages of computer text and includes 10 tables, 13 diagrams, 1 picture, 3 figures and 4 applications.